

Այս վեաւակար միջատի գեմ կռուելու համար խորհուրդ ենք տալիս ձեռք առնել հետեւալ միջոցները:

Ա. Աշխատել աշնանացան հացարոյսերի ցանքը, որքան կարելի է, վաղ կասարել, աչքի առաջ ունենալով, որ այդպիսով կասացուեն աւելի առողջ և ոյժեղ բոյսեր, որոնք թե, պիտի և կենթարկուեն զղթորածանձի աշնանային սերունդի յարձակունկներին, բայց համեմատարար առելի հեշտութեամբ կունանեն վնասը և աւելի քիչ զգալի կինի նրանց համար, ուստի և շատ նշխն կինի կորուսոր: Կամ և այնպիսի միջատարամներորոնք ընդհակառակը, խորհուրդ են տալիս, որքան հնարաւոր է, աշնանացանն ուշ սկսել (այսպիս օր սեպտեմբերի վերջերին, հոկտեմբերին), հաշուի առնելով, որ այդպիսով հացարցոյսերը ծիլեր կարծակին, կրաքարանն այն ժամանակ երբ արգելն զղթորածանձի աշնանային սերունդը վերջացած կինի և այդպիսով բոյսերը ազատուած կիննեն յարձակունքներից: Բ. Այնպիսի գեպքերում երբ շատ է տարածուած այս վնասակար միջատը, խորհուրդ ենք տալիս շափառորել աշնանացանքերը և նրանց առեղ առաօրէն գարնանացան անել: Գ. Յորենի կամ հաճարի հրապուրիչ ցանքեր անել: Աշնանացանքի հացարոյսերը հասնելուց յետոյ յուլիսի վերջերին կամ օգոստոսի սկիզբներին նրանց կից հոդի նեղ շերտերի, մօտառապէս $\frac{1}{2}$ սամ. լայնութեան վրայ ցանել ցորեն, հաճար: Հարաւային երկրներում եթէ այդ աեսակ հրապուրիչ ցանքերը շատ վաղ է կատարած, օգոստոսի սկզբներին պէտք է անսպատճառ խորը կերպով վարել և վրան ծանր հարթիչ (ԿԱՏՈՒ) զլորել: Բոյսի մատաղ ծիլերի վրայ, աշնանացանի հացարցոյսերը հաւաքելուց յետոյ մնացած բոժոններից դուրս եկած զղթորածանձերը ձուեր են զնում: Ա.յդ հրապորներով կարելի է պաշտպանել առելի ուշ երեացող աշնանացանքերի նորածիլ բոյսերը զղթորածանձի յարձակմանքներից և այդպիսով չարիքը կենդրունացնել որոշ աեղերում: Երբ հրապուրելու համար ցանած ցորենի նեղ շերտերում որդերը կոկսին՝ հարսնեակներ գտնանալու պէտք է իսկոյն գուշամով 5 վերջ. և գեռ առելի խորութեամբ վարել օրից և

որդերն ու հարսնեակները հոդի տակ դնալով, կոչնչանան: Դ. Քանի զեռ հատիկները հասկերի մշկաւարելապէս չեն չորացել, պէտք է քաղել արտը: Ե. Դղթորածանձի բոժոններից դուրս դալուց առաջ, պէտք է հնձից յետոյ այս միջատառով վարակուած խոզանները անմիջապէս սյուրել:

Խիստ մեծ է սրա հացրած վնասը զիւզացիների, մանաւանդ ցորնի արաերի համար: Դղթորածանձը աարածւում է քամու օգնութեամբ, որ քշում: աանում է հեռաւոր երակրներ և հարսնեակների օգնութեամբ, որոնք ուրիշ երկրներ են տարւում յարդի հետ միասին: Դղթորածանձի որդերին առանձնապէս վնասակար են միքանի աեսակ պարաղիսներ—մանրիկ կենդանիներ, որոնք կարծ ժամանակուայ ընթացքում բնաջին են անում հազարաւոր այդպիսի միջատներ: Ա.յդ պարազիաները զանազան աեղերում տարբեր չափով են տարածուած լինում: Եթէ մի օր և է արտի զղթորածանձի որդերը մեծ տոկոս են կազմում (երրեմն 90% օրից բարձր), այն ժամանակ չպէտք է այդպիսները ոչնչացնել, որովհետեւ նրանց հետ միասին կոչնչանան նաև օգտակար պարազիաները:

(Կը շարունակուի).

գ. 2.



ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ
ԹԵԱՌ ՄԱՍԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ *

Մեր եկեղեցական—հասարակական կեանքի հրատապ խնդիրներից մեկն է և քահանաների ապահովութեան հարցը, որը հետաքրքրութեամբ քննադատում է թէ Տաճկահայոց թէ Բուռահայոց մամուլի մէջ:

Ա.յդ բանին առիթ տուին Բաթումի քահանաների ոռօնիկ սահմաններու որոշումը,

* Մենք սիրով տպում ենք Շնոր. Նիկողայոս սարկադի այս յօդուածքը որովհետ մեր եկեղեցու մերկայ հրատապ խնդիրներից մեջին և վերաբերում, բայց համայնք ինք նորա բոլոր մօներին, որի մասին առի կունանեանք գրեաւ:

որը հաստատուեց ներկայ Վեհափառ Հայրապետի կոնդակով, և վերջերումն Գեր. Արքաւատիկ, և պահպապոսի քահանայական խնդիր վերնագրով գիրքը:

Բաթումի գեղքի համար արժ. Մելեմն քահանան «Մշակում» և ապա «Արքելքում» տեղեկութիւն տուեց և հաղորդեց ոռօճիկ սահմանելու բոլոր պայմանները: Այդ առիջ տուաւ «Արքելեան մամուլում» այս տարրուայ № 12 «Հովիւ» սառագրող անձին՝ մի յօդուած հրատարակել: «Նուէր թէ հարկ» վերնագրով քննադատութեան ենթարկելով ոռօճիկ հարցը և հակառակ համարելով աւետարանի ոգուն. սրան պատասխանեց «Քիւզանդին»: 1155 և 1156 համարներում՝ պաշտպանելով ոռօճիկ խնդիրը, նոյնական և «Արքելքը» 4385-ում միացաւ վերջին կարծիքին: «Առլհանդալի» արտասպից «Նուէր թէ հարկ» յօդուածը:

Որուահայոց մէջ այդ խնդիրը սկզբունքի տեսակետից քննութեան և հակածառութեան չենթարկուեց, երեխնրա համար, որ ընդհանուրի կարծիքով քահանաների կենակը ապահովեցնելու ամենալաւ միջոցը ոռօճիկ նշանակելուն է և այդ համապատասխան է աւետարանի և մեր եկեղեցու ոգունն մանաւանդ որ մեջ կաթուղիկոսի հաստատութեամբ վաւերացել է և օրինական ոյժ սասացել:

Որովհետեւ «Հովիւը» հայոց բարձրաստիշան համար հոգեւորականներից է և նրա կարծիքը կարող է նշանակութիւն ունենալ որոշ շրջունումն ուստի արժելը հովուի յարուցած խընդիրն նայել պատմական-փրաւական աեսակետից պարզելով այն հարցը թէ արդեօք ոռօճիկ նշանակելը ունի պատմական հիմք թէ, ոչ կամ հակառակ չէ մեր եկեղեցու ոգուն և աւհանադրութեանը:

Հովիւը յայտնելով որ Բաթումումն Պուտում արդեն որոշումներ են արել ոռօճիկ նշանակելու քահանաներին, կամ այդ ճանապարհով են կամենում զնար, զանում է որ ժողովրդի ազատակամ նուերներով քահանայի կեանքը ապահովելը աւելի գերազանելի է քան ոռօճիկ-հարկով որովհետեւ, բացարում է Հովիւը նախ՝ որ շահատենչ քահանաները չիարողանալով սահարկեալ փողերը ժողովել պիտի զիմեն քաղաքական իշխանութեան:

Երկրորդ՝ երր քահանաները սակացոյց ներով ժողովրդից զրամ են պահանջում: այն ժամանակ քահանայք պաշտօնեայք կը լինին Սակարանի և ոչ Աւետարանի: որոնց նման ներին Ցիսուս աքսորեց տաճարից:

Երրորդ՝ քահանաները պիտի ապրին միայն նուերներով և ոչ տուքքով կամ ոռօճիկ նուերն փոխել առողջի կամ ոռօճիկ ինշանակե նուերման հոգւոյն գէմ մեղանչել: «Նուերի փոխարէն արտաքոյ եկեղեցւոյ տուքք կամ ոռօճիկ գանձել՝ կրնշանակե ժողովուրդն ցրտացնել Աստուածականութենէ, ցրտացնել եկեղեցի յաճախելէ, մեռցնել միարանական աղօթքի և գուարանութեան հոգին: Ապա՝ վերջացնելով խօսքը հովիւը ասում է, չպէտք է նոր գրութիւններ քարողելց առանց եկեղեցւոյ անցեան ու ներկային ճանաչելու և առանց ապագային վեաններն նախադասելու: Բարոյականով պէտք է ապահովել նիւթականն և ոչ թէ նիւթականով բարոյականն: (աևս Արքելեան մամուլ № 12):

Եթէ ամփոփենք Հովուի խօսքերը, կը առանանք այս որ հոգեւորականին ոռօճիկ ապալը հակառակ է մեր եկեղեցու սկզբունքին և անցեալին՝ և ներկային էլ վտանդ է սպասնում: Հոգեւորականը պիտի սասանայ միմիայն իրան շնորհած նուէրը ժողովրդականներից և նրանով էլ բաւականանայ:

Հովուի այդ գլխաւոր երեք կետերին սպասախանած լինելու համար նախ՝ տեսնենք նախին դարերում հոգեւորականները ինչպէս եին ապահովումն մեր եկեղեցական հին կանոնները ինչպիսի կարգեր եին որոշել անտեսականի նկատմամբ: Արգեօք ծիշզ է նկատում Հովիւը որ եկեղեցու անցեալին հակառակ է, ոռօճիկը, և տուքք, — հարկը բոլորովին տարբեր բաներ են քան նուէրը: Հովիւը բոլորովին հակառակ է, տուքք, հարկ բառերին զործ է, ածում միայն նուէրը: Նուէր ասելով Հովիւը հասկանում է, այն ինչ որ մենք բոլորս ենք հասկանում: այսինքն նուէրն այնպիսի մի ընծայ է՝ որ մեկը միւսն ապիսի է ապատակամ կերպով, նուերատուն կարող է տալ և չտալ և ոչ չի կարող սափելց կամ յանդիմանել կամ պահանջելց որ նուերատուն անպատճառ ընծան տայ. եթէ նուերատուն ստի-

պուած լինի ընծան տալու հակառակի խր կամքի, ժաղովրդական կարծեքից ձնշուած, կամ հենց իրա նելքին զրգող ձայնին հնար զանդելով—որ ասում է, պարաւոր ես, տուր, այն ժամանակ նույր-ի սահմանից գուրս ենք դալիս և մասնում պարտաւորականի սահմանը, ուրիշ խօսքով այդպիսի պարաւորուած ընծան—դառնում է տուրք՝ հարկ:

Մեր եկեղեցական օրինակատարութիւնների համար արուած կամաւոր ընծայաբերութիւնները նույր են թէ, տուրք. ի հարկէ տուրք են և ոչ նուեր, եթէ, կամաւոր ենք ասում: ոչ թէ նրա համար, որ ամեն մարդ կարող է տալ չտալ ոչչ այլ այն մարով, որ որքան կամնայ, այնքան կարող է տալ բայց պիտի տայ: Ոչ մի ժողովրդական չի ասիլ դու քահանայ, թէև պսակ արել ես, մեռելս թաղել ես, տունս օրհնել ես, բայց ես պարտաւոր չեմ նեղութիւնդ վարձատրելու, այդ քո հոգեոր և բարոյական պարտն է, որ կատարեցիր, «Ճի առեք ճի տուրք ես քեզ կարող եմ վարձատրել և չվարձատրել» այդպիսի մարդուն ժողովուրդը կհամարի անպարտաճանաչ, օրէնքից գուրս եկող պարտիքը չկատարող: Սեղանին ծառայողը, սեղանից պիտի ոււտի ասելով՝ առաքեալլ նուերներին պարաւորական նշանակութիւն տուեց, թողնելով տուրքի քանակիութիւնը ամեն մէկի կամքին. այլապէս հոգեօրականները միջոց չեն ունենալ ոչ միայն ընտանիք կերակրելու, այլ և իրանց պահելու:

Այդ պարտաւորական կարգը Տրդասի ժամանակ քաղաքացիական օրէնքի ոյժ ստացաւ. Տրդաս քիչ համարելով Լուսաւորչի նշանակած զանազան տուրքերը, հրամայեց որ իւրաքանչյուր մեծ դիւզի եկեղեցուն տան Դժիի հող, ազարակներին 4 տան հող, որպէս զի այդ հոգերի արդիւնքն ստանան քահանաները: Եթէ այս կարդագրութիւնը համեմատենք Ամոզի 1886 թուի սահմանած մի չարք հողի հետ (8 օրավար), ահազին զանազանութիւն կդանենք, այժմեան զիւզական մեծ տունը ունի 50 օրավար հող միջինը 30, եթէ այս հաշուով ձգենք, կստանանք $7 \times 30 = 210$ օրավար հող, որով պիտի ազահովուեն երկու քահանայի, սարկաւորի և զարի ըն-

առնիքը, եթէ գրամի վերածենք այժմեան զներով, հաշուելով օրավարը 8 փութ ցորենի տեղ և 210 օրավարի կեսը ցանուած, կունկանք 105 \times 8 = 840 փութ ցանուած տեղ միքն 5 արդիւնք ձգելով, կստանանք 4200 փութ ցորեն, որ այժմեան դնով մօտ 4000 բուրի է:

Միթէ Տրդասի նշանակոծ 4000 բուրի արդիւնք բերող՝ օրէնքով սահմանած հողերը կարելի է չհամարել քահանաներին յատկացուած առջիկ և տուրք: Բացի այդ, բոլոր մէհանների ոսկեղին, արծաթեղինը կալուածները յանձնուեցին եկեղեցիներին, հոգեօրականների կեանքը ասպահովեցնելու համար (տես Ա. Ճ. Ճ. զլ.:

Իսկ Լուսաւորչին սոճիկ կարգուեց 15 զիւզի արդիւնքը իրեւ սեպհական և տոհմական ժառանգութիւն: Նոյն բանը տեսնում ենք զուգընթացարար և յունաց մէջ, նոյն կարգը մոցրեց կոստանդիանոսը. Յուստինիանոսը հրամայեց եկեղեցի շինողներին՝ ազահովեցնել նորաշէն եկեղեցու հոգեօրականների տնտեսականը զրամով և հոգերով:

Ա. Սահակը պատուիրում է Ճշգութեամբ վճարել բոլոր զպտուզ զնախնեաց կարգեալս և զամենայն ընծայս ուխախից, եթէ ոչ «Ճի աի լիցին յօրհնութենէ և ի հազորգութենէ, լնիկրաց հանգերձ ընսանեօք մինչև ապաշխարեցէ, և տուժեսցէ եկեղեցւոյ, վասն զի եկե պատուիրազանց աստուածամարգ» (տես Սահակի 32 կանոնը): Ուրեմն այդ պատուզները—տուրքերը չուուզները ոչ միայն զրկում են եկեղեցուց, այլ և պատժեում: Նոյնպէս և Սահակի 40, 41, 42, 43, 44, կանոնները մի առ մի նշանակում են այն բոլոր տուրքերը, որոնք պիտի ստանան վանքերը և քահանաները, վերջի կանոնում պատճեում է, զրկել պատուիրանացներին Լուսաւորչի և ու հարց օրհնութիւններից:

Այս կանոնները ազագուցանում են որ զրանք տուրքեր են և պարտաւորական նշանակութիւն ունեցող չափ և կանոնի տակ զրած, իւրաքանչյուրի բաժինը որոշած, միթէ ազատակամ նուերը ըստ Հովուի, կարելի է այսպիսի կարգ և չափի տակ դնել:

Դ. Դարում եղած Քանգրի ժողովի

է. թ. կանոնները նպավում՝ են այն անձանց, որոնք սահմանած տուրքերը չեն հասուցանում:

Վաղար Փարագեցին սոճիկ էր սասանում վանահայրութեան ժամանակ. իսկ ինչ որ ասպեկտն ինձ կարգել էին աւել Ներսէջը և Հրահատը—կերակրի հանդերձի և ձիան համար—յայնի չեւ..... այն բաւականանում՝ էր ինձ, և երբեմն զրանցով վանքի պէտքերն էի հոգում» (աեւ թուղթ): Կաղանկատուացին յիշում է 5—դարու մի ժողով Աղուանից աշխարհում որտեղ սահմաննել են միքանի կանոններ քահանաների տուրքերի վերաբերմամբ: «Աղաս մարդոյ և թաղաւորազգի որ ինչ հոգւոյն մասն է տացի խւրովք ձեռովք ի կենդանութեան՝ ձի թամբաւք և սանձիւք, և զոր ինչ կարողութիւն իւր տացի, ապա եթէ ի կենդանութեան չտայցէ, յետ մահուն ընտանիք տացեն..... ապա մէկ մէկ յիշում է իւրաքանչիւր ժողովրդականի տալիք տուրքը վերջում առաւմ է» Զայս պայման արարին եպիսկոպոսն և քահանայք և ապա մարդիկ առաջի արքային (աեւ մեր կանոննազըրքերը և կաղանկ.): միթէ ապատ նուերը կարող է թագաւորի և մեծամեծների ժողովի որոշման խնդիր գտանալ:

Գութինի 555 թուի և 648-ի ժողովների կանոնները և ուրիշ ժողովներինը սահմանում են տուրքերի բաշխման այնպիսի կարգ, ինչպիսին Բաթումն է կարգել միայն այն տարրերութեամբ, որ այնակ պատի էին առմիա այսակ գրամ. այս մասին մի քիչ յետոյ:

Օրբելեանը ժԿ. դարում դնում է այն տուրքերը, որ պարտաւոր են վճարել 600 զիւղ Տաթեու վանքին. «Ունեաց երկուասան գաւառաց հարիւ եկեղեցւոյ ըստ հին Ասհմանացն : Այսակ շեշտում է Հարկ բառը. չի առում նուերը եկեղեցւոյ» :

Աբրահամ կաթողիկոսը 1734-ի կոնդակում հրամայում է, խստի ժողովիլ հետեւալ տուրքերը. «պաղի որբադրամ հոգերամբն, կողովուատ ժամաց, նկարի քառամից, տեսանական, հարսանեաց» :

1836 թուի պալամենիան թւում է, որի-

նակատարութիւնների համար ստանալիք տուրքերի քանակը զրամաք:

1844 թուից Պետերուրդի և Մոսկուայի հոգեկորականները սոճիկ են ստանում մինչև այսօր ուրեմն ներսէս, Մատթէոս, Գևորգ Դ., Մակար և ներկայ Վ. Հափառ. Կաթոլիկոսը կանոնական են համարել և ոչ հակառակ մեր եկեղեցու կանոններին:

Մեր եկեղեցականների մի մասը առաջնորդները յաջորդները բոլորը սոճիկ են ստանում:

Մինչև անգամ Պօլայ պատրիարքները աւելութիւնից թոշակ են ստանում (300 սոկի):

Ներկայ Վ. Հ. Հայրապետի կարգագրութեամբ Բագուի մարդասիրական ընկերութիւնը տարեկան 1500 բուրյի է յանձնում կոնսիստորիային, Նամախու աղքատ զիւղերի քահանաներին սոճիկ նշանակելու համար:

1886-ին մարտի 18-ին Մինօղը սահմաններով քահանայցառներին հասանելիք հողերի քանակը և տուրքերը պատուիրում է քահանայը ունին զիրաւունս ի վերայ Տիման 1048 յ. . . . ընդ ձեռն վիճակացին իշխանութեան և միջոցաւ պատշաճաւոր քաղաքական իշխանութեան պահանջելով զայնս ի հասարակութեանցն» :

Խակ այժմ ինչ են արել Բաթումցիք:

Նրանք համախօսական են կազմել և ուսում արել և ամեն մէկի առաջի տուրքը սահմաննել այնպէս ինչպէս Ս. Ասհակ 32, 40, 41, 42, 43 կանոններով արել է. և վուխանակ զանցառուններին ս. Ասհակի և Գանդըրի ժողովի նման օրհնութիւնից զրկելու և նզովելու, նրանց կանչում են զատարան և արդարութեան ձեռքով պահանջում տալիքը. միթէ բովանդակութեան կողմից Բաթումցոց արածը բոլորովին նո՞յն չէ, ինչ որ արել են Ծրբաւից սկսած մինչև այսօր, մեր պատիքը Ծրբաւի ժամանակ դրամի փոխարէն հող էին տալիս, այսօր հողի փոխարէն դրամ են տալիս:

Այսպէս ասելով, ես չեմ պնդում որ հոգեոր տուրքերը պահանջուեն տէրունական հարկերի խստութեամբ, ոչ, քաւ լիցի:

Այդ տուրքերը ժողովուելով ընդհանուր համաձայնութեամբ, այդպիսի խիստ միջոցնե-

րի զիմելու տեղիք չեն ապէ: 1850-ին գեռ ևս Ներսէս Ե. Հրամայում էր Շամախու կոնսիլիառի այլին իններորդ պատուի, բոլ զինուիրեալսն յանուն պատից կամ յանուն նընչ ծեցելոց և սյուց որով և իցէ անուամբ ընկալնու մի որպէս հարկապահանջ բոնադատութեամբ այլ որպէս քարոզիչ յաղագս հասուցմանց հոգեորական նուիրանաց ըստ Աստուածային պատուիրանաց . . . :

Խոկ այժմ՝ հոգեորականը զատարանի հետ գործ չունի, ժողովուրդը ընդհանուրի համաձայնութեամբ տուրքերի քանակը որոշումէ, և բաժանումէ իւր անդամների վրայ այս ձեւը չի լինում բոնադատական հարկի այլ ազատակամ և բոլորի կամքով եղած է թթէ մի որ և է օրինազանց անձից երեցփոխանը կամ տուրք հաւաքողը զատարանով կապահանջի տալքը, սա էլ չի լինի բանութիւն, որովհետեւ հասարակական կարգերը անհատի քմահաճոյքի չեն ենթարկում և զուր է հովիւր համեմատում զատի զիմելը Պօղոս առաքեալի յորդորի հետ, որ դրում էր, Միթէ ձեր մէջ մի հաւատացող մարդ չկայ, որ անհաւատների զատարանին էք դիմում:

Վերոգրեալներից կարելի է եզրակացնել, որ այս խնդրում տուրքը, հարկի ռոճիկ, նուէր շատ տարբերութիւն չունին, որ ռոճիկ նշանակելը ոչ թէ հակառակ՝ այլ համապատասխան է մեր եկեղեցական կանոններին, որ ռոճիկ նշանակելով մօտենում ենք այն առարկութեան, որին ձգտումէ ինքը Հովիւր, այսինքն որ բարյականը նիւթականին կառավարի և ոչ նիւթականը բարյականին և վերջապէս արդարագատութիւն պահանջելը չի նշանակում՝ մեր եկեղեցուն վեսաել Խոկ քահանայի համար զերագասելի է ստանալ տուրքերը մի հոգուց՝ քան 2000 անձից, այս ձեռվ նաև ազատումէ, անպատուարեր սակարկութիւններից պասկ և զանազան օրինակատարութիւնների կատարելուց առաջ, ազատումէ ընդ միշտ մնօրհնէքին զանազան գաներ փակ գտնելուց: Ծթէ Հովիւր տեսած լինէր զիւղերում անթիւ անհամար վեճերը քահանաների և ժողովրդականների մէջ օրինակատարութիւնների վճարը չապու պատճառով, դրանից առաջացած կուները, հայ-

հայանքները անպատճառ կանդէր՝ որ աւետարանի աշակերանների պատիւը կվերականգնի միմիայն սակացոյց որոշելով: Հովուի զրուածքի գաղափարական կողմը սկզբունքի տեսակատից բարյովին միշտ է և փառաւոր միհուն է ներշնչում: բայց այդ անգործնական է, այն կողմից որ հոգեորականներս չունենք այն զաղափարական բարձրութիւնը ինչ որ պահանջում է աւետարանը: Ճիշտ է կուսակրօնութիւնը սակեղծուել է այն նպատակով, որ բարձր բարյական զաղափարների ամսոյեան հանդիսանայ և իրաւունք ունենայ ժողովրդին ասելու ժողովուրդը, եկ ետելից և կմաքրուես կարուեիս, և մեանելիս յաղթանակով բարբառի ևս յաղթեցի աշխարհի: Բայց այդպէս է, ունենք այդպիսի կուսակրօնութիւն: Եթէ կուսակրօնները աւետարանի ետելից գնալ գժուարանում են, ուր մնաց ամուսնացած հոգեորականները որոնք տուն, տեղ ընտանիք, որդիք ունեն, միթէ դրանց կեանքը ընդ միշտ ապահովուելը հակառակ է աւետարանին:

Եւ զուր է Հովիւր Բամթումի ռոճիկի որոշման վեհափառ Հայրապետի կողմից հաստատելը օքնականակութեան և առանդպատճեան դէմ համարում ընդհակառակն վեհ կաթողիկոսի այդ հասաւասական կոնդակը շարունակութիւն է Լուսաւորչի, Տրդատի, Սահակի կարգադրութիւնների: —

Գալով քահանայական խնդրի երկրորդ մասին որ յարուցեց Գեր. Արիստակէս եպիսկոպոսի զիրքը կանգ կառնենք միայն մի գլուխաւոր կետի վրայ, որով զբաղուեց ար. Արամիանեան «Տարպակ» վերջին համարներում, այն է իւրաքանչիւր քահանային յանձնուելիք ծխի քանակի վրայ:

Գահանանների անտեսական ապահութեան ինդրի եթէ ոչ զիմաւորը՝ դննէ զիմաւոր միջոցներից մէկը կազմումէ ծխերի հարցը:

Թէ արդեօք ծխաբամնութիւնը գոյութիւն ունէր հին ժամանակ մեր մէջ, այդ մասին ունենք հատ ու կտոր աեղեկութիւններ, ս. Աւշակի, Դուինի 555 և 648 թուի ժողովների և Աղուանքի — Վաշականի ժողովի կանոններում: Բոլոր կանոնները մի առ մի չեմ բերել որովհետեւ շատ կձգձգուի ինդիբը, կյիշեմ

միայն ընդհանուր կետերը:

Այդ կանոններից երեսումէ՝ 1) որ ծխարժանութիւնը գոյութիւն է, ունեցել եւ դարուց սկսած, 2) ծխարժանութեան ժամանակ միշտ մեծ քեր են խաղացել ճարպիկ և որկրամոլ քահանաները, 3) որ զբանից այնպիսի ազգութիւններ կոխւներ են առաջացել որ Դուռի 555 և 648 թուականների ժողովները խաղաց արդելել են պաղի և մուտքի պատճառով ծխեր բաժաննելը: Մինչեւ անգամ՝ 648-ի 5-րդ կանոնը պատուիրում է՝ որ իւրաքանչիւր քահանայ ինչքան ծուխ ունի քիչ թէ շատ, նրանով էլ բաւականանայ: Բայց թէ ծխանաժանութեան խանգարումը ուղղակի հետեանք եր սաստիկ կոխւների և վեճերին այդ երեսում է, նախ նրանից, որ ներսէսանի ներկայութեամբ քահանաները եկեղեցում ահազին վէճ են բարձրացրել պաղի բաժանման ժամանակ և երկրորդ՝ եւ զարու Ազուանից ժողովի 6-րդ կանոնից, որ սառում է, «Եթէ քանաց եկեղեցիները շատ են և ժողովուրդը քիչ և ուրիշ քանաց ժողովուրդը շատ է, և երեցները քիչ, շատ ժողովուրդից մի մասն վերցնեն և տան քիչ ժողովուրդ ունեցող երեցներին»:

Այդ վեճերի առաջն առնելու համար, երկու ժողովների կանոնները որոշեցին, որ բարուր ծխականները իրանց տուրքը տանեն զրյալաւոր քահանայի տունը—եկեղեցին, և այդտեղ բարուր քահանաների ներկայութեամբ և մասնակցութեամբ կանոնաւոր բաժանուին այսպէս: «Գլխաւոր քահանային 2½ բաժին, քահանաներին 2 բաժին սարկաւագներին 1½ բաժին, դպիրներին և պարկիշառութեամբ ապրող այրիներին 1 բաժին . . . (Դուռինի ժողով 555 թ. 13 կանոն):

Դուռինի ժողովի այս սահմանը, այսինքն բոլոր զիւղի արդիւնքի մի տեղ ժողովները և կանոնաւոր բաժաննելը ամենափառաւոր սկզբունքն է, որը շատ տեղերում մինչեւ այսօր գործադրում է, և ըստ ձեր շատ ամենաշեշտ այսօր գործադրում է, և բաժում մի ոռոգի սահմանման: Այժմ՝ ընդհանրապէս այդ ձեր այսպէս է, զործադրում քահանաները իրանց արինականարութիւններ անելու համար, արդիներները կամ յանձնում են հաւատալի

քահանայի կամ շարժէ շարաժժ միասին ժողովում են և իրանց ստացած արդիւնքը մէջ բերում և ապա հաւասար բաժանում: Այս ձեռնով ծխարժանութիւնը, այսինքն միմիայն օրինականարութիւնների համար, կոխւների ակղեք չլ տալ որովհետեւ ստացածը հաւասար բաժանում է՝ բայց զժբախարար շատ քիչ տեղ է պատահում, որ սիրով լինեն քահանայը և արդար վերաբերութիւն գետի միմեանց՝ ստացածը հաւասար բաժաննելու մէջ: Հներում զբա տուածը առնում էին նրանով, որ պատուիրումէր տուրքերը բերել եկեղեցին զիւղել մի տեղու աւետարանի ընթերցմանը օրհնել և յետոյ հաւասար բաժաններ: Այժմ՝ բնական տուրքերի փոխարէն կարելի է դրամ տալ փողերը ժողովներ գանձապետի ձեռքը և կանոնաւոր բաժանների մէջ:

Այս կարգը շատ գժուար է, մտցնել զրյալաւորպէս այն պատճառովի, որ իւրաքանչիւր քահանային յատկացուելիք ծխերի թիւը բոլորովին անորոշ է, և անկանոն: Հին կանոններում ծխերի քահանակի համար սահմանած կանոններ չունենք: Այդ հարցը մեծ զարկ ստացաւներկայ զարում: Առաջին անգամ սահմանի տակ զիւեց ծխերի հարցը ներսէս եւ: Կա 1853-ին մարտի 26-ի № 132 կոնդակով արձակած Վարարապի կոնսիստորիայի վրայ, հրամայեց—ցուցակագրել բոլոր եկեղեցիները, զիւղերը—արական իգական անդամներով և ըստ թուոց սահմանական գործու գործու գաղտնական կամ նշանական արական, նշանակել զիւղ քահանայ և զերկուս դպիրս յեկեղեցիս զիւղութիւն: Խեկ նուշում՝ «ըստ հաշուեթուի տանց կամ անձանց արականաց և իգականաց նշանակել զքահանայս, և ուր լինիցին չորք քահանայը նշանակել և զըրս դպիրս և զիւղ սարկաւագ, իսկ ուր իցեն երեք քահանայը նշանակել զիւղիս դպիրս և զիւղ սարկաւագ և ըստ սոցին համեմատութեանց կանոնաւորել և վասըն ամենայն եկեղեցեաց յիւրաքանչիւր քաղաքս և ի զիւղօրայս ամենից նահանգաց: Ներսէս եւ որոշեց որ իւրաքանչիւր 80 տան ունենաց մի քահանայ: Գեղորգ Դ. թոյլ տառաւ որ իւրաքանչիւր փոքրիկ զիւղ՝ լինի թէ, կուզ 10—20, 30, 40, մինչև 70 տառն, անպատճառ

մի քաշանայ պահից 70—ից աւելի 2 քաշանայ, եթե բազմամարդ տեղ է՝ 100-ին մի քաշանայ: Եթե զիւղը «ասկառաթիւ» է՝ ասհմանսցի նոցա յատուկ սեպհական քաշանայ, և եթե առաւել իցէ քան զեօթանատուն՝ երկուս քաշանայու իսկ եթե բազմամարդ առհարիւր տունն մի քաշանայ: (Կոնդակ 1868թ. 21 դեկ. № 562):

1889-ին իսկ նահանգական առեանը երկու անդամ զիմում է սինօղին խնդրելով հաղորդել թէ Հայոց եկեղեցական օրէկով քանի՞ ծուխը մի քաշանայ պիտի ունենայ, հարկատու անձանց հարկից ազատելու խնդրի նկատմամբ: Սինօղը 1891 թուի օգոստոսի 9-ին № 3093 գրում է՝ «Եջմիածնի Սինօղը պատուանի հաղորդելու, որ 50 տունը կարող է ունենալ մի քաշանայ և երկու գափի»:

1892-ի յունիսի 17-ին Սինօղը, Գեր. Արիստակէս եպիսկոպոսի վերջնական եղբակացութիւնը լսելուց յետոյ, որոշում է՝ «Այն զիւղերում որոնք բաղկացած են 150 անից, կարգուի մի քաշանայ, և որքան որ ձեռնշասկինի նա հովուել իւր ժողովուրդը, ուրիշն պաշտօնակից չձեռնադրել իսկ 250 և 300 տուն ունեցող զիւղերում երկու քաշանայ կարգուին»:

Ահա այս է ծխարաժանութեան աստիճանական զարգացումը:

Պ. Արամիսաննանց խօսելով «քաշանայական խնդրի» մասին զնում է մի շատ հիմնական հարց, Սինօղը կամ Գեր. Արիստակէս եպիսկոպոսը ունին արգեօք եկեղեցական—կանոնական հիմք 150 տուն նշանակելու ամեն մի քաշանայի, և եթե չունին ի՞նչու չեն նշանակում 200, 300, նոյն իսկ 400 տուն: Թէ եկեղեցական—կանոնական հիմք չկայ 150 տուն նշանակելու, այդ պարզ է, որովհետեւ չին ժողովներում այդ մասին խօսք էլ չկայ: Սինօղի 150 տուն նշանակելը ամենամեծ թիւն է, այդ ինդրի պատմութեան մէջ, երկու կաթուղիկոս 80 և 70 տուն են նշանակել, Սինօղը 1891-ին 50 տուն, իսկ 1892-ին 150 տուն է նշանակել. ապա ի՞նչով էին առաջնորդւում այդ կարգադրութիւն անողները. արգեօք նրանով որ մի քաշանայ 50-ից, 80-ից, 70-ից կամ 150-անից

աւ ելի չեր կարող հովուել. ամենենին ոչ որովհետեւ, ներսութիւն նման անձը շատ լաւ եր ձանաշում ժողովրդին և նրան հովուելու կարիքի չափը: Ես էլ 50 ծեր քաշանաներից զանազան տեղերում հարցրել եմ թէ քանի՞ տուն կարող են հովուել: Նրանք սկզբում մի դրական պատասխան տալ չեին կարողանում, մերը առում եր 50, մեւը 100, ոչ ոք 150-ի չշնառ, որովհետեւ չեին կարողանում երեսակայել որ 100, կամ 150 տուն ունեցող զիւղին թոյլ կան մի քաշանայ ունենալու, երբ այդ նախապաշարմունքը վերցուեց և հարցը աւելի պարզ տրուեց, բոլորը համարեաս առանց բացառութեան պատասխանում էին 200 տունը ի՞նչ է որ, 300 տուն էլ լինի տանց գմուարութեան կհովուենք: Գոնէ դրանց պատասխաններից և մեր հովիւների կարգադրութիւնների աստիճանական զարդացումն երեսում է, որ սկզբից չենց անհաշիւ քիչ ծուխ ունեցող քաշանաների ձեռնարդրութեան սովորութիւնն է եղել միմիակ հիմքը, որ այդ քան քիչ ծուխ են յատկացրել մի քաշանային:

Այլապէս ի՞նչպէս լուծել այն հանելուկը, որ 150 տուն զիւղը 3 քաշանայ ունի, իսկ 7000 տուն ունեցող բազուն 10—11 քաշանայ:—

Ուզովհետեւ ծիսերի թուիցն է կախուած քաշանաների ապաշնութեան զիմաւոր հիմնաքարը, ուստի և մեր հովեռ վարչութիւնը տանիստեծ ջանքը պիտի անի կանոնաւորելու այդ ինպիրը: Քաշանաները որոնք անդադար գանգատուում են արգիւնքների քիչութեան, ժողովրդից քիչ աստիճանը, անապահով վիճակում գանուելու մասին, չենց որ ասում ես, 200 տուն ունենայ էլ չեն գանգատուիր, իսկ գույքը քաշանայի գեմքը մի տինթարթում փոխում է, փ հարիէ ոչ ի հարիէ ոչ ուր է, եթե Աստուծոյ ողբանութիւնը համանի այդպիսի կարգադրութիւն անի մեր Հայրիկը, մենք ոչ մի գանգատի անդ չենք ունենալ և ժողովրդի հետ հաշտ կապընքը: Այ տեսէլ է ժողովրդի և քաշանաների ծեծը, կոխը, անլուկի հայդունքները արդիւնքի քիչութեան, քաշանաների շատութեան համար, նրա համար հասկանալի կինի մեր քաշանայ

ների աղի արցունքները: Ժողովուրդը բարկացած զուռում է քահանայի վրայ քեզ ո՞վ է ասել քահանայ դասնաս, մենք մի քահանայ ունեինք բաւական էր, մենք մի քահանայից աւել չենք կարող պաշել քեզ ո՞վ էր տառում արագ տարով համախօսական կաղմես, զաս մեր զլիսին բեռն գտանա: Քանի քանի անդամ՝ կափ զիւզ այցելողը այս խօսքերը: — Աչա մեր քահանաների և ժողովրդի իսկական պատկերը ծիսի քանակի վերաբերմութ:

Հարցն այս է, ունի՞նք հնար դուրս գտառ այդ անհախանձելի զրութիւնից: Այս, ունիք հարկաւոր է մի միայն Վեհափառ Հայրապետի և Ամոզդի մի փառաւոր կարգագրութիւն և անպայման ու անշեղի գործադրութիւն բոլոր ստորագաս մարմինների կողմից: Մեր Վեհափառը իւր Հայրիկ Մակղիբը ստացել է ժողովրդից, նա լաւ է ճանաչում ժողովրդի կարիքը: Ամոզդական Հայրերը ժողովրդի մէջ շատ սարի գործած անձնաւորութիւններ են և ժողովրդի պէտքերին ծանօթ, բարեհաձեն սահմաններ որոշել ծխերի վերաբերմամբ ամենաքիչը 150—200 տուն կամ ել աւելի, և զանազան կանոններ այդ ուղղութեամբ պահանջելով խստի գործադրութիւն բոլորի կողմից և կունելը այդ չարիքը մի քանի ժամանակում բոլորովին վերջացած:

Ամենամեծ չարիքներից մէկն է մեզ համար՝ ոչ շետեղականութիւնը և արուած կանոնների զանցաւութեան տալը: Կ'ոչ միջոցներով կարելի է կանոնաւորել այդ խնդիրը և զիմունքներ մշակելով գործադրութեան տալ այժմ ինձ համար անդէպ է այդ մասին խօսելը բայց չեմ զլանալ ասելու, որ թողնելով ընդհանուր կարգագրութիւնը բարձրագոյն հոգեւոր կառավարութեան, ստորագաս վարչութիւնները չպետք է լուս ու մունջ սպասեն հրամանի, այլ նրանք իրանց եռանգսով և աջակցութեամբ պիտի դիւրացնեն հոգեւոր իշխանութեան գործը: Այդպիսի եռանգի մի փառաւոր օրինակ տալիս է Աղեք սանդրօպօլի յաջորդ Արժ. Մատթեոս փարզապետը. նրա քայլը կարող է օրինակ լինել բոլոր մեր զգայուն յաջորդների և գործա-

կալների համար: Արժ. Հայրը տպել է տուել երկու տեսակ վիճակագրական թերթեր, մէկը զիւղերի, միւսը քահանաների համար: 1) Զերշատ ընդարձակ է, դրանով իմացւում է թէ քանի տուն կայ զիւղում, քանի արական և իրական, քանի անասուն ունի տունը, ամեն մի շնչին քանի կոտ ցորեն է ընկնում տունը հարուստ է, համարում թէ աղքատ: 2) Զերշատ տեղեկութիւններ է պահանջում քահանաների մասին, թէ երբ է ձեռնազրուած, քանի անդամից է բազկացած ընտանիքը, ո՞ւրիշ մարդկանց էլ խնամում է, շնչին որբան հոգ պիտի տային, այժմ ո՞րբան է տոււած, հոգը մէկին քանի է տալիս ո՞րբան կալապուղ է ստացել մկրատութեան պսակի թաղման ժամոց—ո՞րբան է, ստանամ, քանի կենդանի ունի:

Հրաւեր ենք կարգում բոլոր մեր եռամեռութ յաջորդներին և գործակալներին կազմել այդպիսի վիճակագրական աեղեկութիւններ և եթէ կղժուարանան համախմբել, թող ուղարկեն Արարատի խմբագրութեան, մենք ամենամեծ ուրախութեամբ կղասաւորենք և կտպինք Արարատում ամեն եղած նիւթերը: Թող իմանան որ միմիայն այդպիսի վիճակագրութիւնից յետյ կարելի է հաստատ և որոշ կարգեր սահմանել քահանաների ապահովութեան համար: Արակես զի հեշտացներ վիճակագրող քահանաների գործը կղնենք այստեղ ընդհանուր ձեռք, որի մէջ կան մի քանի նոր հարցեր, որ չեն մտած և. Մատթեոսի կազմած 2 ձեր մէջ:

Ով գժուարութեամբ կհասկանայ ներքեւում արուած ցուցակը և կղժուարանայ տպել տալ, ինդրում ենք բացարութիւնների համար գիմել Արարատի խմբագրութեան: Մայր Աթոռի տպարանը պատրաստ է ամեն զիւղութիւն տալ գործակալներին տպագրել տալու Ա. Էջմիածնում պահանջուելիք վիճակագրական ցուցակները:

Ահա օրինակը

Կ Ի Շ Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Տ Ե Վ Ե Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Բ

Թուահամար ըստ հարզի.

Գիւղի անունը.

Քանի՞ տուն է.

Երկու սեռը միասին քանի՞ հողի են:

Քանի՞ քաշանայ ունի.

Քանի՞ անդամ՝ ունի քաշ՝ լիսանիքը.

Քաշ՝ ե՞րբ է ձեռնադրուած.

Քանի՞ տուն կարող է կառավարել.

Քանի՞ անով նրա ապրուստը՝ կազաչովուի:

Մէկ զլիխն որբա՞ն հող է ընկնում (փութ).

Քաշանային որբա՞ն ձրի հող է տուած.

Հողը մեկին քանի՞ է տալիս.

Գիւղում քանի՞ մլրտութիւն է լինում տար.

Գիւղում քանի՞ պասկ է լինում տորէնը.

Գիւղում քանի՞ մաշ է լինում տարէնը.

Կաղապառով որբա՞ն է ստանում.

Որբա՞ն է ստանում մլրտութիւնից.

Որբա՞ն է ստանում պասկից.

Որբա՞ն է ստանում ըմադումից.

Որբա՞ն անօրէնէքից.

Որբա՞ն ժամաց.

Քանի՞ մօամիկ գիւղ կայ (մինչև 10 վերսա).

Քանի՞ վերսա հեռու են միմեանցից գիւղերը.

Զմեով հաղորդակցութիւնը ընդհատում է այդ գիւղերի մէջ.